

25) և երբ նորան ոչ մի բանի մէջ չըկարողացան բռնել, շատ դառնացան, և այս՝ այն աստիճանին հասաւ, որ նորան ի մահ դատապարտեցին խաչի վերայ (Ղուկ. 20:19, 19:48):

Այս յօդուածով, իմ նպատակս էր, մի համառօտ գաղափար տալ ընթերցողներին աւետարանի մէջ յիշուած դպիրների հոգւոյ ընթացքի և ուղղութեան մասին, որոնք ժամանակին մեծ զեր են խաղացած և որոնց մէջ արտափայլում են փառամոլութիւն, եռասիրութիւն և շահասիրութիւն, ինչպէս որ արդէն տեսանք վերայիշածիս մէջ:

Սարգիս Տարրիէլեանց.

Լ Ա Յ Պ Ե Ւ Դ ։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ.

• • • Խ Ծ Ա Գ Է Լ Հ ա յ ը .

Ինձմէ զրաւոր տեղեկութիւն ուղեցիր հայրենեացս — Խարբերդի և անտի ցայս վայր ճանապարհորդածս տեղերու վերայ, զոր ահաւասիկ յօժարութեամբ կը փութամ կատարել՝ քաղելով զայն իմ օրագրութենէն:

Խարբերդ քաղաքը շինուած է մի բարձր լեռան վերայ առաջևն ունենալով իւր երկու բարերեր գաշտերն — և լուսական և լուսական կը լիւր բերքերն են ցորեան, բամբակ, խաղող՝ յորմէ ընտիր գինի կը պատրաստուի, լուրիա, կտաւատ, մեղրապօպ (ձմերուկ), սեխ, բրինձ և լն. Արտագրութիւնքն են բամբակ, գինի, սեկ, սպիտակ կտաւ, և երկու գործարաններէն գուրս եկած լաւագոյն չեթարին, որոյ ապրշումն տեղն առաջ կը գայ: Գաւառին առաջնորդն է երեք տարիէն ի վեր Յակոբոս Եպիսկոպոս Ճգնաւորեան, իսկ կառավարիչն՝ Հաճի - Հասան Պէտ անուն անձն, որ նոր եկաւ: Այժմ տեղւոյն երկրագործը իւր արմբութեաց դիւրագնի վաճառման առթիւ շատ կը նեղուի, որմէ առաջ եկած է վաճառականաց և զանազան առետուրականների գործի դադարումն և ազգ: Դպրոցների անկումն, Հեղ մանկունքն Հայոց Խարբերդի կան այժմ թափառական աստեանդ, ծարաւի ուսման, կարօտ դաստիարակութեան: Ո՞վ է որ պիտի կարեկցի նոցա վերայ: Իւրեանց ծնօղքն արդէն ունեցած ատենին էին անկարեկից, որք այժմ կը կրեն ստակի խիստ թանկութիւնը: Խարբերցի հոյն ունի մի անրազդութիւն ևս, — նաև Եղմիածնի Մայր Աթոռոյ Ճեմարանը չըփափաղեցաւ զրկել զոք ու-

սանող, ի Արքին Սանասարեան վարժարանն միայն ունի այժմ, բայց թուով շատ սակաւ՝ ուրիշ գաւառների ի նմա ուսանող բազմաթիւ տղայոց բաղդատմամբ, իսկ ի Կ. Պօլիս և այլ ուրեք ամենեին ոչ. յեւրոպա զանազան քաղաքներ կըթափառեն աննպատակ մի քանի հայ բողոքական երիտասարդներ՝ Խարբերդի Ամերիկեան Միսիոնարաց բացած Արմենիան գուրս եկած:

. . . Հայր ահա, այն դժբաղդութեան տիւուր պատկերի համառօտ նկարագրութիւնը հայրենեացո՝ զորմէ տսկէ աւելին, և յիովին ուրիշ անգամներ զրել խոստանալով՝ կըգամ իմ ճանապարհորդութեան, յայտնելով միանգամայն թէ Խարբերդի հայ ժողովուրդը մօտաւորապէս 60000 կըլինի, փոքրագոյն մասով մայրենի եկեղեցիէն անջատուած և բողոքական և կաթոլիկ եկեղեցեաց յարած:

Ես արդէն մեծ իղձով կըպատրաստու էիներկայ լինելոյ համարի Մոյր Աթոռն Արարատեան, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեաննուիրական հանդէսն վայելելու, որպէս մի ուխտաւոր՝ ժամանակէ ի վեր ցանկացող, և այս՝ Մայիսի սկզբները երբ կըհաւաքուէին ոռուսաստանի հայոց զանազան թեմերի պատգամաւորները ի Ս. Էջմիածին՝ կատարելու համար ընտրութիւնն ամենայն Հայոց կաթողիկոսութեան:

Շատ ուրախ էի, որ առիթ պիտի ունենայի միանգամայն ի Տփխիս վեց տարիներէ հետէ պանդխտացող իմ հարազատը տեսնելու. Իմ այս զիտաւորութիւնը իմացաւ մեր Ս. Առաջնորդն և յանձնեց ինձ պաշտօն խնդրակութեան Ս. Մեռօնի, որոյ պակասութիւնը զգալի եղած էր գաւառին մերոյ. Յուլիսի 5ին առի խնդրակութեանս պաշտօնագիրը և տուի հրաժեշտի ողջոյններս որոց անկ էր. անցայ Ո-Լ-Օ-Յ-Յ հասունացած կիսահունձ դաշտի միջէն, հանդիպելով ժրաջան հնձուորներու, որք բուռն կերպով առաջ կըտանէին օրհնուած գործը. Նոյն օրն իջևանեցայ Խօթն ժամ հեռուն Շեխնան, պանդոկն, ուր զիշերը երկիւղ ունէինք յաւազակաց և հետեւեալ օրը անցայ սիրելի Եփրատը, որ գարաւոր յիշատակներ կը զարթուցանէր յիս իւր հանդարտ և վեհ ընթացիւք. Կըքալիմ Ա-Ն-Հ-Յ-Յ, Ա-Ր-Հ-Յ-Յ, Ա-Ր-Հ-Յ-Յ, Ա-Ը-Յ-Յ և Ս-Ֆ-Ր-Ա-Ր հայաբնակ գիւղերէն, որոց տափարակ արդիւնարեր սկահող դաշտերն հնձուորների ամենայն սիրով և ժրաջանութեամբ աշխատող երկսեռ խումբերն և որոց հնձած որաների մի զմիով բարդոցներն ուշքս կըզրաւեն. Այս տեղ ևս ոչ սակաւ ծաղկած է երկրագործութիւնը՝ նման Խարբերդի. Յուլիսի 6ին հասայ ի քաղաքն Բալու, որոյ Հայոց այժմեան առաջնորդն է խարբերդցի Սարգիս վարդապետն, որ մի քանի իշխաններով Հաւառու վանքը գնացած էր այնտեղ ինչ ինչ կարգադրութիւններ անելու համար. ուստի չըկըցայ զինքն տեսնել. Այս քաղաքի վերայ ահաղին ապառաժ և շատ բարձր մի սուր լեռ կայ, որուն գլուխը այժմ՝ քայքայուած մի բերդ, ուր Երկար ատեն աղօթած է. կըսին, մեր արդիւնաւոր և մեծ վարդապետն Ս. Մեռ-

բոպ, և աստիսկ ըստ աւանդութեան տեղացւոց յայտնուած են նմա հայացի գրերն մատամբն Անեղին. Այս տեղի արուեստագործութիւնը և վաճառականական գործը ընդհանրապէս Հայոց ձեռքն է, Տեղոյն բնակիչք հայ և մեծ մասամբ թուրք և քուրդ են. Սոքտ լաւ կրվարուին հայերի հետ և ունին մի մեծ շեխ, որ աղօթելու շատ կրպարապի, որուն կը հետեւին իրենց ժողովրդի շատերը, որոնք Ըեխի հրամանաւ հայ մսագործների ձեռօք մորթուած միսը ուտելէ կը խորշին. Որու համար մսագաճառ հայերը ստիպուած են մի որ և իցէ թուրքի ձեռօք մի քիչ արիւն հանել մորթուելիք կամ մորթուած անասունէն, որպէս զի վաճառուի միսը. Աստ հրապարակային լեզուն է քրդերէնը գրեթէ. Մեր ազգայնոց կրօնական զգացումներն, եկեղեցեաց երգեցողութիւնքն առ հասարակ կանոնաւոր և միօրինակ լաւ են ուրիշ տեղերու վերայ, թէպէտե ձայնագրութիւն սորված շեն. Դպրոցները կարելի չէ գովել և կամ պարսաւել. Եթէ երբէք պէտք ունենան ատկէ աւելին իրենց զաւակաց ուսուցանելու, կարող են երկու ժամ հեռաւորութեամբ Հաւաւ մեծ գիւղին մէջ Միացեալ Ընկերութեանց բացած միջնակարգ վարժարանն զրկել. Մանաւանդ որ թէ Քերրին և թէ Քեղին շատ հեռի շեն ասկէ, յորս կան նոյն ընկերութեանց բացած բաւական լաւ վարժարաններն. Խարբերդի հայուն անրադդ մանկտին միայն այս շնորհներէն զուրկ են. Յուլիսի 7 ին Խարբերդի, Զնգուշցի, Ըերոցի և Քալուցի յիսունի շափ բարեպաշտ ուխտաւորաց հետ մեկնեցայ դէպի Մշոյ Ա. Կարապետի վանքը. աւազակների երկիւղը պաշարած է զմեզ առհասարակ. Երկու ժամ հեռուն երեկոյին Խոշոշութեանց զմեզ թէ Կենճէ Մ--Բ--Ր--Հ--Ք նստած է. Ըատ նշանաւոր է Թէտէ առապար լեառն և Էլէկ Աւտոմէ ըսուած անտառուտ տեղի հրապարակն. վերջապէս այս սարսափահար երկիւղներով յուլիսի 12. չորս օրուան միջոցի հասանք Ա. Կարապետի նշանաւոր վանքը՝ որուն քարն ու հողն, կարծես հետդ կը խօսին, օդն ու զանազան ծաղիկների անոյշ բուրմունքն կը զմայլեցնեն զմարդն. Ուխտաւորաց բազմութիւնը այնքան շատ է, զոր վանուց ընդարձակ գաւիթներն և հրապարակներն շեն բաւեր պարունակելու. Այստեղ՝ տեղի ունեցած լարախաղացների խաղերն, և զանազան առետրականների ձայներն, վաճառելու բերուած հարիւրաւոր ձիերու խրինջիւններն, ոչխարաց՝ նոցա գառանց, կովուց և հորթուց մայուններն և բառաչներն, որք կը խլացնեն զլսելիս մարդոյ, անկարելի է նկարագրել. Երեկոյին յեկեղեցին գնացինք և ջերմեռանդութեամբ երկրպագեցինք Աստուծոյ, որ զմեզ Մշոյ Սուլթանին բարեխօսութեամբ՝ անվնաս հասցուց անդր. Ժամասացութիւնը եկեղեցւոյն շատ անկանոն է, այնպէս որ, չէ կարելի համեմատել զայն Բալուայ գեղերէն միայն հետ անգամ. Մխիթարական է ըսել որ, տիրացու մը

Յակոբ անուն, Մայր Աթոռն Արարատեան Զայնագրութիւն սովորած և անդր նոր հասած, պատկառելի կընէր երգեցողութիւնը իւր աղու ձայնովը, երբ որ կերգէր *), . . .

Իսկ ես ներկայ եղող ուխտաւոր քահանաներէն և ժողովուրդէն կըլսէի, որ կասէին — Մէք Խրիմեան Հայրիկին և կամ Սրու անձտեանցին կուղեմք վանահայր և առ այս քանիցս հանրագրեր և հեռագրեր հասուցած եմք յԱզդ. Պատրիարքարանն Կ. Պօլսոյ, Արքան կողրային իրենց վարժարանաց չգոյութեան մասին, որով իրենց մանկտիք թշուառ եղեր են. և իրօք ալ թշուառ եղած էին նոյն իսկ վանրի մէջի գիշերօթիկ տղայքն, որոց ցնցոտի հագուստն, զոր ծածկած էին կապոյտ շապիկով մը իրր համազգեստ ժառանգաւորաց վարժարանի՝ աղտոտ էին. կեղտոտ էին նոյնպէս եւ վերմակներն մահճակալների վերայ, Տղայոց խեղճ և թշուառ վիճակը մարդոց կարեկցութիւնը կըշարժէր. Այդ տղայք յանձնուած էին խնամոց Դեռնդ անուն մի քահանայի, որ կստանար ամիսը մի օսմոսկի, կըդասախօսէր Տարերք Քերականութիւն և կրօն բայց ոչ գոհացուցիչ կերպով. Քանի օր առաջ Յակովը վարդապետի կուսակցութիւնը հեռացուցած էր վանքէն Տաճկերէնի և Գաղղիարէնի դասախօսն. Զրգիտեմ ի՞նչ հաճոյք կըզգան, որ երբ իրենց կիրքերը առաջ տանել կամենան՝ կըձեռնարկեն իմաստութեան տաճարները քանդել — հայ մանկուոյն գեղեցիկ ապագայն խամրել և փճացնել. Պատուական Հայր, միթէ կըկարծես որ Գլակայ հոյակապ և հնաշէն վանքը մի կանոնաւոր գիշերօթիկ վարժարան պահելու կարող չէ. Ար ամեն բան աժան է և Գլակայ Ս. վանքն աշխարհի զանազան խաւերէն կընդունի ուխտագնացութիւններ իւր սիրասուն և բարեպաշտ ժողովուրդէն, միայն թէ ունենայ մի անփառունակ և լաւ վանահայր. Թողլով Իննակնեայ սուրբ վանքն իր սոյն տիսուր վիճակին մէջ՝ մեք մեկնեցանք Յուլիսի 16ին դէպի Կարին, դարձեալ մի և նոյն ահով և երկիւղով պաշարուած.

(Ն-Ե-Ն-Ն-Է-Լ)

Յարութիւն Քահ. Յակովիրեանց.

(*) Որչտփ յիշումենք, և տարի տռաջ ոմն կարապետ. Ա. կարապետի վանուց վանահայր + այժմ հանդուցեալ) Մամբրէ Եպիսկոպոսից ուղարկուած լինելով ի Մայր Աթոռա. Ժաւանգաւորաց դպրոցում ի միջի այլոց՝ սովորեց Զայնագրութիւն եւ հանդուցեալ ի Տէր Գէորգ. Գ. Կաթուղիկոսի հաճութեամբ եկեղեցական հոգեւոր երգոց ձայնագրեալ գրքերը ստանալով՝ վերադարձաւ. Չորս տարուայ ընթացքում շատ հեշտութեամբ կարելի էր բազմաթիւ ձայնագրադէտ երգիչներ ունենալ. որոնք իրանց ներդաշնակ եւ կանոնաւոր երգեցողութեամբ՝ հոդեկան միսիթարութիւն աղդէին ջերմեռանդն ուխտաւորներին. Բաց ենք թողնում ուղեւոր Արժ. Հօր դրութեան միջից այն էջերը. որոնք նկարագրումեն միաբանութեան մէջ տեղի ունեցած խռավութեան եւ կուսակցութեանց տիսուր արկածները. որոնք ըստ վկայելոյ ուղեւոր Արժ. Հօր՝ մէծ գոյթակղութիւն էին պատճառում բարեպաշտ եւ ջերմեռանդն ուխտաւորներին.